ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԲԵՆԳԱԼԻԱՅԻ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌԸ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿՏԱԿԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՇԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1860 թ. հուլիսի 15-ին Նոր Նախիջևանի հայ հասարակությունը Մ. Նալբանդյանին ընտրեց իր լիազոր ներկայացուցիչը և ուղարկեց Հնդկաստան՝ կորսայան եզրին հասած կտակագումարները փրկելու համար։ Մ. Նալբանդյանը եղավ Հնդկաստանում և մեծ ջանքերի գնով կարողացավ հաղթող դուրս գալ անգլիական գաղութային դատարանի դեմ և ստանալով 60000 ռուպի՝ այն մինչև վերջին դանկը հանձնեց հայրենի քաղաքի հասարակությանը։

Օգտվելով Մ. Նալբանդյանի ձերբակալությունից, նրա քաղաքական թշնամիները շարամտորեն զրպարտում էին նրան, որ իբր նա ստացած գումարի մի մասը յուրացրել է։ Մ. Նալբանդյանն ինքը չհասցրեց հաշվետու լինել քաղաքի ժողովի առաջ, իսկ նրա ձերբակալության ժամանակ կտակների հարցով դատավարության փաստաթղթերը կորան։

Հրատարակության ներկայացվող փաստաթուղթը դատական գործի վճռի պատճենն է, որ անգլերեն բնագրից թարգմանվել է դատավարությունից հետո, Մ. Նալբանդյանի հայ դատապաշտպան Պետրոս Հակոբ Պոլի կողմից։

Փաստաթուղթը ժամանակին մենք հայտնաբերել ենք Նոր Նախիջևանի մագիստրատի այն վավերագրերում, որոնք ժամանակին ձեռք ենք բերել Նոր Նախիջևանցի Բեղելյաններից և հանձնել Մ. Մաշտոցի անվան Մատենադարանին (տե՛ս Նոր Նախիջևանի մագիստրատի արխիվ, Ֆրթ. 233, վ. 232)[1]։

Հրատարակության ներկայացվող վավերագիրը ոչ միայն հետաքրքիր տեղեկություններ է պարունակում կտակագումարների ստացման գործում Մ. Նալբանդյանի թափած ջանքերի վերաբերյալ, այլև հնարավորություն է տալիս վերջնականապես նրան ազատելու չարանենգ զրպարտություններից։

ՌԱՖԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԴԱՏԱՎՃՌԻ ՊԱՏՃԵՆԸ

Բենգալիո Ֆորտ-Ուիլլյամի ծայրագույն դատարանի վճռաթղթի՝ 1861 թ. սեպտեմբ. 26-ի դատավարության, որի մեջ Միքայել Նալբանդյան հանդիսանում է պահանջատեր և Չարլզ Սվինտոն Հոգդ և այլ ոմն պատասխանատու։

Այս պատճենը հանված է ըստ ցանկության Պետրոս Հակոբ Պոլի։

Վիկտորիա Ողորմությամբն Աստուծո թագուհի Մեծ Բրիտանիո և Իռլանդիո Միացյալ թագավորության, հավատո պահապան և այլն...

Ամենայն ստացողաց սույն ծանուցագրի—ողջույն։

Հայտնի լինի ձեզ, որ այս թղթում, որը ցուցակագրված է Բենգալիո Ֆորտ-Ուիլլյամի ծայրագույն դատարանում արևելյան Հնդկաստան, ի ներկայության պատվարժան դատավորաց վերոհիշյալ դատարանի, պ. Չարլզ Ռոբերտ Միտչելլ Ջեկսոն՝ ասպետի արդարադատության և պատվարժան պ. Մորդոնտ Լոոսըն Ուելս՝ ասպետի արդարադատության, դատավարական երրորդ նստաշրջանին, Նորին մեծություն Վիկտորիայի գահակալության քսան

---

[1] *Վավերագրի մասին մեր համառոտ հաղորդագրությունը տե՛ս «Բանբեր Երևանի Մատենադարանի», № 4, 1958։*

և հինգերորդ տարում և փրկչական հազար ութ հարյուր վաթսուն և մեկ թվականի սեպտեմբ. 26-ին,— այսպես է գրված.—

Բենգալիո Ֆորտ-Ուիլլյամի ծայրագույն դատարան.

Արդարադատություն.

Պատվարժան պարոն Չարլզ Ռորերտ Միտչելլ Ջեկսոն՝ ասպետ արդարադատության, և պատվարժան պարոն Մորգոնտ Լոսրն Ուելլս՝ ասպետ արդարադատության։

Հինգշաբթի, սեպտեմբերի 26-ին, նորին մեծություն թագուհի Վիկտորիայի գահակալության 25-րդ տարին, և փրկչական 1861 թվականի պահանջատեր Միքայել Նալբանդյանի և պատասխանատու՝ Բենգալիո գլխավոր կառավարիչ Չարլզ Սվինտոն Հոգգ, նաև ըստ արքայական հրամանի՝ Հնդկաստանի ստատս-սեկրետարի միջև։

Այս դատը լսվեցավ և քննվեցավ ներկա սեպտեմբերի 18-ին և 25-ին, սույն ատյանում՝, երկու կողմի դատվողների և նոցա պաշտպանների ներկայությամբ, սեպտեմբերի 4-ից տրված ծանուցագրի նախնական ընթերցմամբ, որի մեջ «կարգադրված էր երկու կողմի լիակատար համաձայնությամբ ընդ ձեռն նոցա պաշտպանների, որ այս դատը դնետք է մտնի օրակարգի մեջ և լսվի ու քննվի ներկա նիստին» և սեպտեմբերի 5-ից տրված երկու կողմի երդմնտյին հաստատ դրավոր ցուցումների ընթերցմամբ։ Այս երկուսն էլ կցված են գործի մյուս թղթերին՝ սեպտ. 5-ից։

Ապա կարդացվեցավ սեպտ. 6-ին տրված և 7-ին գործին կցված թուղթը, որի մեջ գրված էր երկու կողմի համաձայնությամբ ընդ ձեռն նոցա պաշտպանների, թե այս դատը պետք է առաջ տարվի և գրվի դատական խորհրդի վճռական մատյաններում։

Հոգուտ հիշյալ պահանջատիրոջ՝ պատասխանատու Չարլզ Սվինտոն Հոգգի պատասխանի մի մասը ընդդեմ պահանջագրի կարդալուց հետո (այդ պատասխանի 1 և 2-րդ պրակները ամբողջովին և 3-րդ պրակի սկզբից մինչև այն տեղը, ուր ասված է «թղթույս այսորիկ» երրորդ ֆոլիանտի մեջ և 4-րդ պրակը՝ սկզբից մինչև վերջը և ապա շարունակաբար մինչև 5-րդ ֆոլիանտի այն տեղը, ուր ասված է «աստ ի սկզբանն ասացավ» ևս 21-րդ ֆոլիանտից ամբողջովին 6—22 պրակները և 24-ը սկզբից մինչև այն տեղը, ուր ասված է «ազնիվ դատարանս»), ապա Միքայել Նալբանդյանի, Գևորգ Ավետի, Հովհաննես Ավգալի և Հարություն Մայիլի բերանացի վկայությունները՝ հոգուտ հիշյալ պահանջատիրոջ՝ բաց դռներով՝ լսելուց հետո, ապա դարձյալ հոգուտ նույն պահանջատիրոջ՝ Aa-1, A N-2, Bб-N1, B-N 2, CC-N 1, CN-2, CN-3, CN-4 մինչև C-N 17 փաստաթղթերը կարդալուց և երկու կողմի պաշտպաններին լսելուց հետո, ինչպես նաև գլխավոր դատախազի իբրև պատասխանատուներից մեկը գահի ներկայացուցչության հանձնառությունից և ի պաշտպանություն բարեգործության՝ որ իբրև թե չի վերաբերում Նալբանդյանին՝ դատարանի առաջ ներկայանալուց հետո,— դատարանը հայտարարում է, որ կտակող Մասեհ Բաբաջանի, նույն և Մարտիրոս, 1794 թ. մայիսի 30-ին կազմած կտակը պետք է հաստատվի և գործադրվի նորա կամքին համեմատ, ուստի հրամայում է կատարել ըստ պատշաճին։

Նաև դատարանը հայտարարում է, որ կտակողի հիշատակյալ կտակի հավելվածը, որ կազմված է 1795 թ. ապրիլի 1-ին, չէ կազմված օրինասահ-

ման կարգով, և ուրեմն իրավունք չի տրվում ծախելու այն տունը և դրամները Ս. Գրիգորի եկեղեցուն տալու։

Այլ և դատարանը հայտարարում է, որ Նոր Նախիջևանի ուսումնարանները, աղքատանոցը, հիվանդանոցը և որբանոցը, որոնք գրված են նորա կտակում, իբրև մնայուն հիմնարկություններ, իրավունք ունին ստանալու հիշյալ կտակողի կալվածքի բոլոր եկամուտի (հաշվելով նաև տոկոսային հավելումները) 8/16 մասը. այն է՝ ուսումնարանները 2/16, աղքատանոցը 2/16, հիվանդանոցը 2/16 և որբանոցը 2/16։

Դատական ծախքերի—հոնորարների—կարգադրիչ պաշտոնյան պետք է որոշե երկու կողմերի վճարելիքը, ինչպես և գլխավոր դատախազինը, առանձին-առանձին. դատից առաջ և դատի ընթացքում եղած բոլոր ծախքերի վերաբերյալ։

Գլխավոր դատախազին, որ գործում է ի դիմաց կառավարության և բարեգործության, նաև գլխավոր կառավարիչի պաշտպանին վճարում են պահանջատերը և պատասխանատուն միասին։

Ի նկատի առնելով, որ պատասխանատու Չարլզ Սվինտոն Հոգդ՝ գլխավոր կառավարիչ Բենգալիո և միաժամանակ կառավարիչ կալվածոց և սեփականության վերագրյալ կտակողի՝ խոստովանում է, թե ունի յուր ձեռքում ի հաշիվ հիշյալ կալվածքների՝ միլակ և 32.000 արևելյան Հնդկաստանի ընկերության (կոմպանիայի) ռուփի, որ դարձրած են պետական արժեթղթեր, նմանապես և 38.000 սիկկա ռուփի, որ նույնպես դարձրած են պետական արժեթղթեր և որ այս երկու գումարների մեջ մտնում են 10.464 սիկկա ռուփի, 9 աննա և 3 պի—երկու տների վաճառման արդյունքը—ինչպես ասված է հիշյալ պատասխանաթղթի մեջ, և ի նկատի առնելով, որ պահանջատերը Նոր Նախիջևանի վերոգրյալ հաստատությունների ներկայացուցիչն է, այլ և այն. որ գլխավոր դատախազը չի ուզում ճանաչել հիշյալ հավելվածի օրինականությունը, նաև ի նկատի առնելով որ հիշյալ գումարը՝ 10.464 սիկկա ռուփի, 9 աննա և 3 պի՝ այն 2 տների վաճառման արդյունքն է, ևս ի նկատի ունենալով, որ վերոհիշյալ երկու գումարները—մի լաք և 32.000 «կոմպանիայի» ռուփի, և 38.000 սիկկա ռուփի—դարձրած են պետական արժեթղթեր—ի բաց առյալ 10.464 սիկկա ռուփի, 9 աննա և 3 պի—հիշյալ կտակողի կալվածքների եկամուտն են—դատարանը որոշում է, որ հիշյալ պատասխանատու Չարլզ Սվինտոն Հոգդը վերոգրյալ երկու գումարներից—միլակ, 32000 «կոմպանիայի» ռուփի և 38000 սիկկա ռուփի—պետք է հանե 10464 սիկկա ռուփի, 9 աննա և 3 պի, իբր արդյունք այն երկու տան վաճառման, և ապա այդ երկու գումարի (որ պետական արժեթղթեր են դարձրած) մնացորդից վճարե իրան վերաբերյալ դատական ծախքը, որից հետո մնացածը 2 մաս բաժանե, մի մասը տա պահանջատիրոջը, որ պիտի հասցնե վերոհիշյալ հաստատություններին՝ նախապես սահմանված չափով և ամենաօգտակար եղանակով գործադրելու համար։

Նաև՝ հիշյալ պատասխանատու Չարլզ Սվինտոն Հոգդը յուրաքանչյուր տարին մեկ անգամ (քանի դեռ այս դատական վճիռը չէ բեկված) հիշյալ տների վաճառման արդյանց—10464 սիկկա ռուփի, 9 աննա և 3 պի տոկոսների 8/16 մասը, ինչպես և չծախված կալվածքի եկամտի (բոլոր անհրաժեշտ ծախքերը հոգալուց հետո) 8/16 մասը պետք է վճարե Նոր Նախիջևանի քաղաքագլխին՝ հիշյալ հիմնարկությանց կառավարության համար նախասահման-

յալ կարգով և ամենաօգտակար ձևով գործադրելու։ Այդ դրամների ստացման համար հաստատությունները ստացագիր պետք է տան քաղաքագլխին, իսկ վերջինս՝ Բենգալիո գլխավոր կառավարչին։

Կալվածոց կառավարիչը պետք է տեղեկանա և ստուգե, թե որքան փող է գործադրում օգուտ պարտապահանջ դատարանի Կալկաթայի «փոքր բանտի» բանտարկելուց, հօգուտ Հայաստանից եկած չքավոր հայերի. այլ և թե ինչ չափով կտակողի կամքին համեմատ է գործ դրված հիշյալ երկու գումարի (մեկ լակ 32000 կոմպանիայի ռուփի և 38000 սիկկա ռուփի) 9 աննա և 3 պի հանելուց և հարկավոր ծախքերը հոգալուց հետո։

Այս ամենի, ինչպես և հետագայում ասվածների մասին ավելի լավ տեղեկություններ հայթայթելու համար, այս գործին հարակից բոլոր անձինք պարտավոր են ցույց տալ կալվածոց կառավարիչին (հարկ եղած դեպքում նաև երդմամբ) բոլոր մատյանները, հաշիվները, թղթերն ու գրագրությունները, որ իրանց ձեռքում են գտնվում, կամ իրանց հսկողության ու վերատեսության ենթակա են կամ որոնք այս կամ այն կերպ կապ ունին գործի հետ։

Հիշյալ կառավարիչն իրավունք ունի հարկավոր դեպքերում երդմամբ տեղեկություններ հարցնելու և առանձնակի հանգամանքներում մի քանի պարշաբանող որոշումներ անելու։

Այս կառավարիչն իրավունք ունի նաև հավանություն տալու հիշյալ գումարների՝ ի նպաստ պարտապահանջ դատարանի բանտարկելոց կտակողի կամքին համեմատ—ամենալավ եղանակով գործ դնելու նախագծին։ Նա պետք է գործ դնե այդ բանի վրա—ինչպես կտակողի կամքն է հիշյալ 10464 սիկկա ռուփի, 9 աննա և 3 պի գումարի տոկոսների 6/16 մասը, այլ և Չարլզ Սվինտոն Հոգգի ձեռքում գտնվող 3-րդ տան վարձագնի ու եկամուտի 6/16-ը (բոլոր անհրաժեշտ ծախքերը հոգալուց հետո)։ Նա պետք է կազմե նախագիծ այն գումարների գործադրության, որ հիշյալ կտակի նպատակներին համապատասխան սահմանված են ի նպաստ խեղճ հայազգյաց, այն է 10464 սիկկա ռուփի, 9 աննա և 3 պի գումարի 2/16 մասը, և 3-րդ տան վարձագնի և եկամտի 2/16 մասը (բոլոր անհրաժեշտ ծախքերը հոգալուց հետո)։

Գլխավոր դատախազին պետք է հանձնվին դատարան հրավիրող բոլոր ծանուցագրերը և լիակատար իրավունք պետք է տրվի նորան մասնակցություն ունենալու կառավարչի որոշումների մեջ։ Եվ ամենայն ոք, որին վերաբերում է այս գործը, լիակատար իրավունք ունի առաջարկություններ անել կառավարչին՝ այդպիսի նախագծերի վերաբերյալ։

Այս դատարանն իրան է վերապահում հետագայում այս մասին որևէ նոր որոշում անելը և այս դատի՝ մինչև կառավարչի տեղեկագիրն ստանալու օրը եղած՝ ծախքերի հաշիվը կազմելն ու ստանալը։ Իսկ մինչև այն ժամանակ երկու կողմն էլ լիովին ազատություն ունին ժամանակ առ ժամանակ՝ երբ հարկ լինի այս դատարանի խորհուրդներին դիմելու։

Հաստատում եմ. Սըր Բարնս Պիկոկ,
ասպետ արդարադատության և գլխավոր
դատավոր հիշյալ Ֆորտ-Ուիլլյամի.
26 սեպտեմբերի, 1861 թվականի

Վկայում եմ.— Պ. Յ. Պոլ—օրենսգետ
Սոնդիր, Ստակ, Քոլլիս և Մորֆիլդ՝ օրենսգետներ։

Ֆ. Ս. Սոնդիր—օրենսգետ.
Ջոզեֆ Գուդիվ՝ գործավար։
Ս. Թ. Մ. Ջեկսոն

Մ. Լ. Ուելլս.

Հրամայում է ընդօրինակել այս դատավճիռը ամբողջովին կամ հատվածներով—ըստ պահանջման պարոն Պետրոս Հակոբ Պոլ օրենսգետի, ի վկայություն որի դնում ենք այս վճռաթղթի վրա մեր կնիքը, որով կնքում ենք մեր գրագրությունները՝ սույն դատարանի որոշմամբ։

Վկա.— Սըր Բարնս Պիկոկ, ասպետ արդարադատության, գլխավոր դատավոր հիշյալ Ֆորտ-Ուիլլյամի։

2 հոկտեմբերի 1861 թ.
ի 25 ամի մեր գահակալության։
Ջոզեֆ Գուդիվ՝ գործավար։
Թ. Վ.

Կնիք
գլխավոր
դատարանի
2 հոկտեմբերի, 1861 թ.